գործելով նա եկաւ Արգան[1] քաղաքը, ուր նորան արտասուելով դիմաւորեցին Ջառուահի մարդիկը մեծ բաղմութեամբ. ապա նա եկաւ Խլաթ, որ նորան դիմադրեց. Հարաշին պաշարեց եւ առաւ քաղաքը, բաժանելով նորա աւարը իւր զինուորների մէջ։ Խլաթից մեկնելով նա տիրեց մի զկնի միւսի ամրոցների եւ բերդերի, մինչեւ եկաւ Պարտաւ, ուր բնակեցաւ։

Նոյն ժամանակ խաքանի որդին Աարպատականում էր՝ ասպատակելով, աւարի առնելով, գերելով եւ սպանելով. Վարդանակերտը նորանով պաշարուած էր. երկիւղ կրելով, որ նա կը տիրէ քաղաքին, Հարաշին դաղտ մարդ ուղարկեց վարդանակերտցիների մօտ՝ նոցա իմացնելու իւր նոցա մօտ դալստեան մասին, պատուիրելով նոցա համբերել... Խաղարը հեռացան քաղաքից, եւ երբ Հարաշի իւր գնդով այնտեղ եկաւ, դտաւ քաղաքը թափուր թշնամուց։ Խաղարը մեկնելով դիմեցին Արտաւիլ, սակայն այնտեղից եւս հեռացան, իսկ Հարաշի բանակեցաւ Բաղարվանում. նորա մօտ եկան խառնիխուռն բաղմութեամբ աքէոդ (սպիտակ) պարսիկները եւ ողջունեցին նորան, ասելով՝ "Քեզ վայել է, ով առաջնորդ սրբազան պատերազմում եւ աւարառութեան մէջ"։ Հարաշին հարցրեց. 'Ես ի՞նչ գործ ունիմ այդ բանի հետ,. նոքա պատասխանեցին. "Խաղարաց զօրքը բաղկացած է 10.000 մարդուց, նոցա հետ են 5.000 դերի կամ շղթայած մուսլիմներ ազնուական տնից. բանակած են չորս մղոն հեռի։" Հարաշին չուեց դիշերով եւ հասաւ թշնամուն դիշերուայ վերջին, երբ նա դեռ քնած էր. նա սփռեց չորս կողմ իւր մարդիկը, որոնք շրջապատեցին խաղարներին արշալուսին. արեւը երեւալիս մուսլիմները իրենց սրերը նոցա դէմ մաշեցին եւ կոտորեցին բոլորին,

---

[1] Իմա Արգն։